

638.4

q-13

~~705~~
~~1191~~

Այս կաշիքը № 1-4

1. Դրշի շնորի (հարկ)

2. Գոշ

3. Գրամբեր երեխաներ

4. Այնչի համար Աղաշ

638.4

9-13

OCT 2010


ՀՐԱՏԱՐԱԿ. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ № 29

Ռ. ԳԱՐԻԵԼԵԱՆ

ՄՐՋԻԻՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(Պատմաւածք)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Թ Ի Յ Լ Ի Զ

Տպարան «Մամուլ» ԸՆԿ. Լօրիս-Մեխիկան փողոց № 31

1916

12 MAR 2013

23.2.28

ՄՐՋԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՄԻՐՄՕ, ԿԱՐԱ ԵՒ ԿՈՆՕ

Գարուն էր:

Ձիւնը վաղուց էր հալւել: Ձիւնածածկ սպիտակ գետինը փոխել էր իր զգեստը—կանանչել, դալար բոյսերով էր ծածկւել:

Հովիտները, դաշտավայրերն ու անտառները քանի գնում՝ աւելի ու աւելի էին գեղեցկանում: Այս ու այն կողմը երևում էին բազմագոյն անթիւ ծաղիկներ, որոնց սքանչելի բուրմունքը տարածւել էր օդի մէջ:

Ձորս կողմը եռում էր կեանքը:

Թիթեռները ճախրում էին օդում, իսկ թռչունները հնչեցնում իրենց քաղցրիկ դայլայները:

Գարնանային ահա այդպիսի մի գեղեցիկ օր, կանանչազարդ անտառի մէջ հազիւ նշմարելի մի նեղ շաւղով անցնում էին երեք մըջիւն: Թէ ո՛ր էին գնում, կամ ո՛ւր շտապում, յայտնի չէր, միայն շարունակ առաջ էին գնում: Գնում էին առանց դադարի:

Իսկ անտառում խշշոցն ու երգերը լսում էին անընդհատ:

Արդեօք մեր երեք մըջիւնը լսում էին այդ ա-



67331-68

մենք: Գուցէ լսում էին, բայց ժամանակ չունէին ուշադրութիւն դարձնելու:

Այդ բոլորին նրանց միայն մի բան էր զբաղեցնում, այն է՝ որքան կարելի էր հեռու լինել բզեզներից ու մողէսներից և չհանդիպել նրանց: Անալիտան բզեզները յաճախ էին կտրում նրանց ճանապարհը:

Մըջիւնները դեռ հեռուից հէնց որ զգում էին թշնամու մօտ լինելը, անմիջապէս շեղում էին իրանց ճանապարհը, մտնում խոտերի մէջ, մինչև որ բզեզը կամ գիշատիչ միջատն անցնէր-գնար: Երբ Թշնամին հեռացած էր լինում, մըջիւնները դուրս էին գալիս իրենց թաքստից և աւելի արագութեամբ առաջ վազում:

Ախր ուր էին գնում նրանք:

Երեքն էլ յանկարծ կանգնեցին և սկսեցին իրանց գլուխների վրայի երկար յօդաւոր շօշափուկները (եղջիւղները, բողկուկները, արագ-արագ շարժել:

Նրանցից մէկը մօտեցրեց իր շօշափուկները միւսի շօշափուկներին:

Ի՞նչ էր նշանակում այդ:

Բանից դուրս եկաւ որ նրանք խօսում էին:

Եւ ահա թէ ի՞նչ էր ասում մէկը միւսին.

— Կարա, սիրելիս, ես կարծում եմ, որ այս ճանապարհը այնքան էլ ապահով չէ:

— Ինչո՞ւ, Միրմօ, հարցրեց Կարան:

Միրմօն, որ առաջինը խօսեց ու մի փոքր զայրացած էր, աւելի արագ-արագ և ուժգնութեամբ

զարկեց իր շօշափուկները Կարայի շօշափուկներին, որ նշանակում էր.

— Ի՞նչպէս թէ ինչո՞ւ. մի՞թէ չես տեսնում, որ այդ գիշատիչ բզեզները մեզ հանգիստ չեն թողնում. քանի-քանի անգամ մեր ճանապարհը կտրեցին: Վերջապէս, եթէ մենք շարունակ այսպէս ահագին շըջաններ անելով գնանք, հաւատացիր որ երեկոյեան դէմ հազիւ կարողանանք վերադառնալ տուն:

Կարան ոչինչ չասաց, որովհետեւ նա էլ համաձայն էր Միրմօյի հետ և աւելի էր զայրացած: Եւ ճիշտ որ, մինչև երբ պէտք է բզեզներն ու մողէսները նրանց անհանգստացնեն: Հերիք չեղաւ:

Մինչ այդ երրորդ մըջիւնը լուռ էր, բայց երբ տեսաւ, որ Կարան ու Միրմօն կանգնել ու մտածում են բզեզների մասին, մօտեցաւ նրանց, իր շօշափուկները քսմանց առաջ Միրմօյի և ապա Կարայի շօշափուկներին, որով ուզեց ասել.

— Տղերք, ամենից լաւն այն է, որ խօսելով դուր ժամանակ չկորցնենք, այլ շարունակենք մեր ճանապարհը:

Երրորդ մըջիւնը, որի անունը Կոնօ էր, այդ ասելուց յետոյ, առանց ընկերներին նայելու, շարունակեց ճանապարհը: Միրմօն այդ որ տեսաւ, դիմեց Կարային ու ասաց.

— Կեցցէ մեր Կօնօն. սիրում եմ նրա անվախութիւնը. շատ խելօք բան ասաց: Ես կը հետևեմ նրան: Գնանք, գնանք... Հարկաւոր է մեր նոր բնակարանի տեղը շուտ գտնել:

Միրմոն վագեց Կոնոյի ետևից, յետոյ էլ Կարան վագեց: Շուտով երեքն էլ միացան ու մոռանալով թշնամիների վտանգը, արագ-արագ առաջ վագեցին:

Արդէն բաւական առաջ էին գնացել, երբ հեռում մի լոյս երևաց: Անտառը շուտով պիտի վերջանար:

Մըջիւնները քայլերնին արագացրին: Շուտով դուրս եկան անտառից և մտան անթիւ գոյնզգոյն ծաղիկներով զարդարած մի բաց տեղ: Այդտեղ փայլում էին իրար ետևից ցողունի վրայ շարած կարմիր ու դեղին զանգակիկները: Հովանոցաձև ծաղիկները մեծ քանակութեամբ գունագեղ գորգի պէս փռած էին գետնին. մէկ կողմում կարմիրներն էին, միւս կողմում՝ սպիտակ, դեղին ու կարմրագոյնները: Թիթեռները, բզեզներն ու մեղուները անդադար մէկ ծաղկից միւս էին անցնում:

Երեք մըջիւնն էլ զգացին ծաղիկների քաղցր բուրմունքը: Կարան սքանչացած բացականչեց.

—Օ, ինչ հիանալի է. այստեղ մեզ համար շատ լաւ կը լինի: Ո՛րքան անուշ կարելի է ձեռք բերել մեր կովերի համար:

—Գիտէ՞ք ինչ կայ, — խօսեց Կոնոն. — ինձ թւում է, որ այստեղից մի փոքր հեռու պէտք է արտեր էլ լինեն, որոնցից մեր մառանները կը լցնենք ձմռան պաշարով. մեր փոքրիկները առատ կերակուր կունենան: Կեցցէ... Յառաջ... Հը՛, Միրմո, ինչո՞ւ կանգ առար...

Կարան ու Կոնոն ուրախ տրամադրութեան մէջ էին, բայց Միրմոն մոռալուած կանգ էր առել: Ո՛ր-

քան էլ ընկերներն շտապեցրին, նա տեղից չշարժւեց: Միրմոյի շօշափուկները արագ-արագ շարժւում էին: Կարան այլևս չկարողացաւ համբերել, ուստի հարցրեց Միրմոյին.

—Ինչո՞ւ ես կանգնել, է՛:

—Սպասիր, մի խանգարիլ, — զայրացաւ Միրմոն և երկու քայլ առաջ գնալով, նորից արագօրէն շարժեց շօշափուկները: Յետոյ մօտենալով ընկերներին, ասաց.

—Գիտէ՞ք ինչ կայ. ճիշտ է, այո՛, այստեղ շատ լաւ է, շատ, բայց... բայց առանց փորձանքի չէ այս տեղը: Ես շատ լաւ զգում եմ թշնամի մըջիւնների հոտը և նա քանի գնում՝ մօտենում է: Չէ, եկէ՛ք հեռանա՛նք այստեղից. եկէ՛ք մի ուրիշ ճանապարհ ընտրենք... Միթէ ոչինչ չէք զգում:

Կարան և Կոնոն էլ շարժեցին իրենց շօշափուկները: Գուցէ նրանք առաջ էլ զգացել էին թշնամու մօտ լինելը, բայց այնքան էին տարւել ծաղիկների բուրմունքով, որ մոռացել էին վտանգը: Կարան և Կոնոն երբ թշնամու հոտն առան, այնպէս վախեցան, որ մոռանալով Միրմոյին, սկսեցին փախչել:

Միրմոն չգիտէր՝ նրանց հետևէ՞ր թէ ոչ:

Շատ քիչ է պատահում, որ մըջիւններն անհամաձայն լինեն միմեանց հետ. կարծես բոլորն էլ մի տեսակ են մտածում: Բայց երբեմն պատահում է որ համաձայնութիւն չի լինում: Այդպէս էլ հիմա եղաւ: Միրմոն մտածում էր ինչ անելիքը: Ո՛րն է լաւ. հե-

տակէր փախչող ընկերներին, թէ մի ուրիշ ճանապարհ ընտրէր:

Միրմօն երկար չտատանւեց:

— Է՛հ, մտածեց նա. — Կարան և Կոնօն խելօք բան արին: Ուրեմն լաւ է որ ես էլ գնամ նրանց ետեւից:

Միրմօն շատ անհանգիստ էր, որովհետեւ զգում էր, որ թշնամիները մօտենում են, և նա վազեց ընկերների ետեւից ու մտաւ անտառ: Բայց սրբան եղաւ նրա զարմանքը, երբ այս ու այն կողմ վազելով այս ու այն կողմ նայելով, ոչ ոքի չտեսաւ: Միրմօյի քէֆը կտրուեց:

— Այս սրտեղ կորան, ասաց նա մտքումը:

Շատ ման եկաւ, շատ այս ու այն կողմն ընկաւ, բոլոր նեղ շաւիղները հետազօտեց, բայց և այնպէս ընկեր մը չիւննեցից ոչ ոք չեւեաց:

Վերջը ինչ անէ, ինչ չանէ, մտածեց բարձրանալ մի երկար ցօղունի վրայ: Բարձրացաւ: Շօշափուկները շարունակ շարժման մէջ էին: Հակառակի պէս ընկերների հոտը չքացել, կորել էր: Դրա փոխարէն լաւ զգում էր թշնամիների հոտը:

«Ա... ուրեմն թշնամիներն էլ զգացել էին մեր երեքիս մօտենալը և դրա համար էլ սկսել էին հետապնդել մեզ», անցաւ Միրմօի մտքովը:

Միրմօն այժմ հասկացաւ, որ թէ ինքը և թէ ընկերները թակարդն են ընկել: Է՛լ ազատուել չի լինելու: Ով գիտէ խեղճ Կարան ու Կոնօն էլ հիմա արդէն նրանց ճանկերում են:

Միրմօն վախեցաւ: Եւ ճիշտ որ, սով էլ լինէր նրա տեղը, կը վախենար:

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ... ԹՇՆԱՄԻՆԻՐԸ...

Միրմօն զգում էր, որ թշնամիներն արդէն շատ մօտիկ էին. հարկաւոր էր շուտ փախչել:

Վճռեց ցօղունից իջնել. միտք չուներ մնալ վերևում, ոչ բան էր երևում այնտեղից և ոչ էլ Կարայի և Կոնօյի հոտը կար:

Եւ այն է ուզեց իջնել, երբ յանկարծ խոտի խշշոց լսեց և ապա սաստիկ զգալի եկաւ մըջնային հոտը: Նա նայեց ներքև և ինչ... երկիւղից քիչ մնաց ցած գլորւէր, բայց ինքն իրան ժողովեց և սկսեց վերև բարձրանալ... Գետնի վրայ անհամար մըջիւններ գալիս ու գալիս էին և Միրմօյի ցօղունի շուրջը հաւաքւում:

Դրանք թշնամիներն էին, կատաղի թշնամիները:

Միրմօն զգուշութեամբ տերևի վրայով անցաւ քիչ աւելի երկար հարևան ցօղունի վրայ ու գնաց, ծայրին նստեց:

Իսկ ներքևում մըջիւնները աւելանում ու աւելանում էին. կարծես մտադիր չէին հեռանալու. բոլորել էին ցօղունի շուրջը և խորհում էին, թէ ինչպէս անեն, որ օտար-երկրացի Միրմօյին ողջ-ողջ գերի վերցնեն: Շատ մտածեցին, շատ վիճեցին, բայց չկարողացան մի բան որոշել: Մէկն ասաց.

— Լսեցէք, ինչ եմ ասում. կարծում եմ, որ մեզանից մէկը պիտի բարձրանայ վերև և յայտնի այն օտար-երկրացուն, թէ նա այսուհետեւ մեր գերին է և թող հնազանդւի:

Բոլորն էլ համաձայնեցին այդ առաջարկին:

Մըջիւններէց ամենաուժեղը և յաղթանդամը սկսեց բարձրանալ: Թէև Միրմօն փոքր էր, բայց նա էլ պակաս ուժեղ չէր: Երբ ցօղունի վերևից տեսաւ բարձրացող Թշնամուն, վճռեց կենդանի նրա ձեռքը չընկնել, ու պատրաստեց մարտնչելու մինչև վերջին շունչը:

Թշնամի մըջիւնը անվախ բարձրանում էր և քիչ-քիչ մօտենում. այն է, հա, քիչ էր մնացել որ հասնէր Միրմօյին... Բայց յանկարծ Միրմօն ինքը քիչ ցած իջաւ, բռնեց իր ամուր ծնօտիկներով Թըշնամու գլուխը նեղ տեղից ու մի անգամով կտրեց ու վայր նետեց և էլի բարձրացաւ իր առաջւայ տեղը:

Անգլուխ Թշնամին ցած գլորեց... Ներքևում մըջիւնները սաստիկ զայրացան:

Միրմօն էլ շատ էր զայրացած: Գիտէր, որ վերջ ի վերջոյ իրան սպանելու են, և հէնց զրա համար էլ վճռել էր քաջութեամբ մեռնել:

Բայց ահա մի ծանօթ և դուրեկան հոտ զգալով, նայեց ներքև:

Օ, ինչ ուրախութիւն. Կարան էր՝ իր ընկերը, որ շտապ-շտապ վեր էր բարձրանում:

—Միրմօ ջան,—ասաց Կարան ուրախացած,—այդ միթէ դու ես...

Միրմօն որ սկզբում ուրախացել էր, այժմ զարմացած հարցրեց.

—Այդ ինչպէս ընկար նրանց ձեռքը, Կարա:

—Օ, Միրմօ, այդ մասին մի ուրիշ անգամ կը

պատմեմ, եթէ ողջ մնանք. բայց հիմա ինձ գործով են ուղարկել քեզ մօտ: Ի՞նչ ես ուզում անել: Նրանք չափազանց շատ են: Հնազանդւում ես: Միայն զիտենաս որ նրանք ստրկատէրեր են...

Միրմօն զայրացաւ:

—Ես, հնազանդւեմ, երբէք: Թող սպանեն և այն ժամանակ ինձ ստրուկ դարձնեն: Իսկ դո՛ւ, միթէ դու արդէն մոռացել ես մեր ցեղական յատկութիւնը՝ մնալ ազատ, ոչ ոքից կախում չունենալ և ծառայել միմիայն մեր սեփական հայրենիքին. միթէ մտադիր ես նրանց ստրուկը լինելու... Ո՞ւր է Կոնօն...

—Կոնօն քաջաբար կուելիս, մի քանի տեղից վիրաւորեց. նրան տարան իրենց բնակավայրը:

Միրմօն, լսելով Կոնօյի քաջագործութիւնը, ոգեւորեց.

—Կեցցէ Կոնօն,—ասաց նա.—տեսնում ես... Ո՛չ, գնահ, գնահ ասա քո նոր տէրերին, որ ես վճռել եմ կուել մինչև վերջին շունչս:

Կարան անշարժ էր, կարծես նա մտադիր չէր իջնելու:

Միրմօն հարցրեց:

—Ինչո՞ւ չես գնում. գնահ, Կարա, եթէ ուշանաս, քեզ համար վատ կը լինի:

—Ո՛չ, Միրմօ,—ասաց Կարան.—ես էլ կը մնամ այստեղ, թող ինձ էլ սպանեն քեզ հետ...

Միրմօն աւելի քաջալերեց: Նա քնքշաբար մօտեցրեց իր ծնօտիկները Կարային և սկսեց շոյել նրան...

ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՎՃԻՌԸ:—ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ներքևում թշնամիները անհանգիստ էին: Կարան նրանց խաբեց, գնաց ու չեկաւ:

—Ա՛, ուրեմն այդպէս: Ու վճռեցին երկուսին էլ կենդան չթողնել:

Ահագին իրարանցում ընկաւ նրանց մէջ: Բարձրանալ այլեւ ոչ ոք չէր համարձակուում: Մի քանիսը բարձրացան հարեան ցօղունի վրայ, բայց տեսնելով Միրմօյի և Կարայի պատրաստի ծնօտիկները՝ արագութեամբ վայր իջան: Թշնամին վճռեց այլ միջոցի դիմել: Նրանք բոլոր միասին հաւաքեցին այն ցօղունի շուրջը, որի վրայ էին Միրմօն ու Կարան, և սկսեցին ցօղունի բունը կրծել:

Միրմօն և Կարան զգացին, որ շուտով վայր է գլորւելու իրանց ապաստարան ցօղունը... փրկութեան էլ ոչ մի յոյս:

Իսկ ցօղունի բունը կրծում էին ամենայն եռանդով:

Ցօղունն սկսեց թեքւել. և այն է մազ էր մնացել որ ընկնէր, և մէկ էլ յանկարծ սարսափելի շփոթութիւն ընկաւ յարձակողների մէջ. աղմուկ ու տեւրենքի մի այնպիսի խշշոց բարձրացաւ, որ ամեն ինչ խառնուեց իրար:

Անտառի միջով վազ էին տալիս մի քանի աղւէսներ, իսկ նրանց ետևիցը զայրացած՝ լեզուները դուրս հանած և հանգիւյած բոյսերը կոխոտելով վազում էին չորս-հինգ որսկան շներ, որոնց հետևում էին

որսորդները հրացանները պատրաստի բռնած: Վերջինները աղմկելով քաջալերում էին շներին:

Այդ բոլորը կատարեց շատ կարճ միջոցում: Եւ երբ դրանք անցան-գնացին անտառում նորից լռութիւն տիրեց...

Չոր խտի, տերևների ու ճղների տակից կամաց-կամաց դուրս եկան երկու մըջիւն: Մէկի շօշափուկներից ձախը մի քիչ վիրաւորւած էր, բայց երկուսն էլ իրենց լաւ էին զգում:

Դրանք Միրմօն և Կարան էին, երկուսն էլ անչափ զարմացած էին:

Այն ի՛նչ ձայներ էին, այն ի՛նչ ափղահայ կենդանիներ էին, որ անցան, ոչինչ չկարողացան հասկանալ: Միայն տեսան գլորւած իրանց ապաստարան ցօղունը, որի վրայ երկար ժամանակ պաշարւած էին մնացել:

Ցօղունի շուրջը ընկած էին մեծ քանակութեամբ թշնամու դիակներ: Մի հատ կենդան մըջիւն չէր երեւում: Ով կարողացել էր փախչել, փախել էր, իսկ ով չէր կարողացել՝ ոտնատակ լինելով ջարդւել էր:

Շնորհակալ լինելով իրենց անյայտ ազատողներին, Կարան և Միրմօն շտապեցին հեռանալ այդ սոսկալի տեղից: Հաւաքեցին իրենց բոլոր ոյժերն ու շտապեցին տուն:

—Փա՛ռք, փա՛ռք մեզ ազատողներին,—ասում էր Կարային Միրմօն:—Տեսա՛ր, Կարա՛ ջան. եթէ ես չլի՛նէի, հիմա քեզ սպանած կը լինէին... Դէ՛, շտապիր, արագ շարժուենք:

Վերջապէս նրանք կարողացան գտնել իրենց ծա-
նօթ ճանապարհը: Տխուր և շատ յոգնած՝ շտապում
էին տուն: Բայց ամիսոս որ ընկերներէից մէկը՝ Կո-
նօն, չկար:

ՄԻՐՄՈՒ ԵՒ ԿԱՐԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Արեւն արդէն մայր էր մտել: Զով քամի էր
փչում:

Մըջանոցից բաւական մօտիկ անտառի միջից
դուրս եկան երկու մըջիւն: Նրանք շատ էին յոգնած,
այնքան փոշոտուել էին, որ կարծես ալիւրի տոպ-
րակից լինէին դուրս եկած: Ինչպէս երեւում է եր-
կար ճանապարհ էին կտրել, որովհետեւ շատ դանդաղ
էին շարժւում:

Մըջիւններէից մէկը ընկերին ասաց.

—Ու՛ֆ, Միրմօ ջան... սւֆ... Ինչպէս յոգնել
եմ. երբ պէտք է հանգստանանք. հիմա էլ հօ թըշ-
նամիները մեզանից մօտիկ չեն:

—Կարա, ասաց Միրմօ. զգում եմ, որ մօտ ենք
մեր մըջանոցին: Միթէ մերոնց հօտը չես զգում...

—Ա՛խ, անիծւին մեր թշնամիները, որ շօշափուկ-
ներէից մէկը վիրաւորեցին: Զգում եմ, բայց ոչ այն-
քան լաւ:

—Իսկ ես, Կարա, շատ և շատ լաւ եմ զգում. ե-
թէ մի փոքր էլ անցնենք, այ, այն բլուրն էլ անց
կենանք, այն ժամանակ շատ մօտ կը լինենք մեր
տանը:

Կարան մի փոքր քաջալերուեց, ոյժ առաւ:

—Օ՛ֆ, Միրմօ, երկար կը հանգստանանք և մի լաւ
կը քնենք...

—Ի հարկէ, Կարա, կը քնենք, եթէ միայն մեր ըն-
կերները աշխատանքի չկանչեն մեզ:

Լռեցին:

Եւ ճիշտ որ, մըջանոցը շատ էլ հեռու չէր:

Անցան արտի մօտով: Ոսկեփայլ, կանանչախառն
արտը երեկոյեան զեփիւռից ծովի ալիքների նման
մեղմ տատանւում էր: Ծաղիկների թիւը անհաշիւ էր:
Նրանց քաղցր բուրմունքը տարածւել էր օդի մէջ:

—Նայիր—ասաց Միրմօն Կարային,—և լաւ. յիշիր
այն արտը. հասկերը շուտով հասած կը լինեն, հար-
կաւոր է գալ այստեղ և ձմեռւայ պաշար հաւաքել:

Կարան սկզբում չպատասխանեց, բայց յետոյ
խօսեց մի քիչ զայրացած.

—Է՛հ, Միրմօ, դեռ գնանք տուն, մի լաւ հանգըս-
տանանք, իսկ դու արտի մասին ես խօսում: Ա՛յ,
այն թշնամիները, որ ինձ գերեցին, նրանք ամենևին
աշխատանքի մասին չեն մտածում...

Միրմօն անբաւական եղաւ Կարայից:

—Պօ՛ւօ՛ւօ՛ւօ՛ւօ... Կարա, ուրեմն դու էլ
հաւանեցիր նրանց անգործութիւնը: Քեզանից չէի
սպասում. նրանք աւագակներ են, նրանք ստրկատէ-
րեր են... Ա՛յ-անյ-անյ... ուղիղն եմ ասում՝ քեզանից
չէի սպասում... Ուրեմն նրանք լաւ են, հա՛, որ փախ-
չում են ազնիւ աշխատանքից:

—Օ՛, սօ, Միրմօ, ես ամենևին չեմ համակրում

նրանց... երբեք... Բայց... ախր ես յոգնել եմ, հասկանում ես, շատ եմ յոգնել... Գնանք, գնանք... Ա... սպասիր... զգացի, զգացի, Միրմօ... մօտենք մեր տանը... վազենք...

Եւ Կարան ու Միրմօն առաջ վազեցին: Բարձրացան մի բլրակի վրայ. նրանց առաջ երևաց այն տափարակը, որտեղ նրանց մըջնանոցն էր գտնուում: Օ, որքան ուրախացան: Նրանք հաւաքեցին իրանց վերջին ոյժը և առաջանից աւելի արագ վազեցին:

Այդ միջոցին մըջնանոցում հանգստութիւն էր տիրում: Իսկ բանուր մըջիւններն աշխատանքի վրայ էին. ոմանք ներսում պատեր էին շարում կամ եղածը նորոգում, ոմանք նորածին մըջիւններին կերակրում, ոմանք էլ շարունակ հող էին դուրս կրում:

Պահակ զինւորները պահպանում էին մուտքը:



Պահակ զինւորները պահպանում էին մուտքը:

Գլխաւոր մուտքի պահակները յանկարծ անհանգստացան: Նրանք զգացին, որ շտապով դէպի իրանց մըջնանոց են գալիս երկու մըջիւն: Իսկոյն յայտնեցին ներսի եղածներին: Ներսից դուրս Թափեցին զինւորները: Բանուորները մի րոպէ դադարեցրին իրանց աշխատանքը և մնացին սպասողական դուրսեան մէջ:

Մըջիւններից մի քանիսը յանկարծ ուրախութեան շիկոց արձակեցին իրանց ծնօտիկներով: Մէկի շօշափուկները մօտեցան միւսի շօշափուկներին, երկրորդը խօսեց երրորդի հետ, երրորդը չորրորդի և այլն, ու այդպիսով նրանք իրար յայտնեցին հետեւեալ ուրախալի լուրը.

— Ընկերներ, մերոնց հօտն է գալիս. մերոնցից են...

Երկիւղն անցաւ. այժմ բոլորն էլ ուրախ-ուրախ սպասում էին եկողներին:

Հեռում երևացող Կարան և Միրմօն այնպէս էին վազում, որ հէնց որ հասան իրանց ընկերներին մօտ, ուժասպառ գլորեցին նրանց ոտքերի առաջ, այնքան յոգնել էին:

Ընկերները մօտ վազեցին: Ճանաչեցին Միրմօյին և Կարային: Մէկը մաքրում էր գծազգ ընկերների փոշին, միքանիսը աննդարար զովացուցիչ հիւթեր բերին նրանց համար:

Ընկերների ուրախութեանը չափ չկար:

Զգուշութեամբ տարան Կարային և Միրմօյին ներքի յարկը, ուր խոնաւութեան պատճառով գոգ էր...

Կարան և Միրմօն անմիջապէս պառկեցին հան դրստանալու և քուն եղան մինչեւ առաւօտ:





Մրջանոցի ցեղի յարկեր:

ԱՇԽԱՏԱՆԻ ՄՐՋԱՆՈՅՈՒՄ: ՀԻԻԹԱԼԻ ՊԱՇԱՐ

Երբ մեր ծանօթ մրջինները հետեւեալ օրը նո-
րից տեսան իրանց ընկերներին, ի հարկէ շատ ուրա-
խացան և աւելի մեծ եռանդով կական օրւայ աշխա-
տանքին: Ամեն օր կարելի էր նրանց տեսնել մըր-
ջնանոցի այս կամ այն սենեակում աշխատելիս:

Մրջնանոցում համարեա ամենքը ևս աշխա-
տում են:

Ահա մեծ սրահներից մէկում երեաց մի բանւոր:
Նա իր ծնօտիկներով ինչ-որ սպիտակ ձւաձե բան էր
տանում: Բանւորից յետոյ վազէ վազ անցաւ աշ-
խոյժ Միրմօն. նա էլ ծնօտիկներում բռնած ունէր
ինչ-որ սպիտակ բան:

Միրմօն հանդիպելով հակառակ կողմից վազող
Կարային, կանգ առաւ: Երկուսի շօշափուկներն իրար
խփւեցին: Միրմօն ասում էր.

— Կարա, ի՞նչ ես անգործ թրեւ գալիս. վազիր,
շուտ արա, հասիր թագուհուն. նա երկրորդ յարկի
սրահում ձու է ածում, իսկ ընկերները հաւաքում
են. այ, ես էլ վերցրի և տանում եմ ձւերին յառ-
կացրած սենեակը: Դէ, շուտ գնա:

Կարան շտապեց Միրմօյի ասած տեղը:

Թող Կարան թագուհու ածած ձւերը հաւաքի, իսկ
մենք հիմա գնանք Միրմօյի ետեւից և տեսնենք ուր
է գնում նա:

Ահա նա ու նրանից առաջ վազող բանւորը
մօտան երկար սրահի ձախ կողմ երեւացող խորշը—

փոսր: Այդ խօսքի կամ դռան միջով Միրմօն մտաւ մի սենեակ: Այդ սենեակում միմեանց վրայ շարած էին սպիտակ ձւաներ... Որքան շատ էին...

Միրմօն ձուռն վայր դրեց այդ սենեակում, ապա անցաւ մի ուրիշ սենեակ: Այնտեղ էլ ձւեր կային, բայց դրանք աւելի մեծ էին ու աւելի երկար:

Միրմօն նորից վերադարձաւ առաջին սենեակը և մի մեծ ձու վերցնելով բերաւ երկրորդ սենեակը և մի կողմ դրեց, ապա միւս բանւորների հետ սկսեց հետազօտել սենեակում եղած ձւաները, Նրկորդ սենեակից էլ բանւորները վերցնում էին ձւաները և տեղափոխում մի ուրիշ՝ երրորդ սենեակ: Բանւորները շարունակ գնում-գալիս էին:

Առաջին սենեակը նոր ածած ձւեր էին բերում և աշխատում եղածները լաւ տեղաւորել՝ սենեակից սենեակ փոխադրելով:

Միրմօն նորից յայտնւեց առաջին սենեակում, այդտեղ հանդիպեց Յագօին ու կարային: Նրկուան էլ ձւեր էին բերել:

—Այլեւս ձու չկայ, ասաց կարան, գուցէ յետոյ լինի: Սրանց կերակրել չմոռանանք. արդէն միքանի բնկերներ սկսել են կերակրել: Դէ հիմա գնանք հիւթեր բերենք:

Նրեքով դուրս եկան, գնացին պաշարեղէնի պահեստն ու շուտով վերադարձան:

Հիմա բաւական հետաքրքրական աշխատանք էր կատարւում սենեակներում: Գնանք նայենք:

Ահա բանւորներից մէկը լիզեց մի ձու, անցաւ

և լիզեց երկրորդը, երրորդը: Մեր ծանօթ մըրջիւնները ևս նոյն բանն էին անում:

Արդեօք ինչո՞ւ էին այդպէս անում:

Բանից դուրս է գալիս, որ նրանք այդպիսով կեքակրում են ձւաներին՝ տալով նրանց զանազան քաղցրիկ սննդարար հիւթեր:

Ճիշտ է, ձւիկը ոչ բերան ունի, ոչ լեզու, բայց հիւթը հեղուկ է, ուստի եւ իրան-իրան ներս է ծըւում և այդ սննդից ձւիկը զարգանում է, աճում և ապագայում այդ ձւիկից փոքրիկ մըջնիկ է դուրս գալիս:

Նրբ ձւիկն աճում է, քիչ մեծանում, նրան տա-նում են առաջին սենեակից երկրորդը: Բոլոր ձւերը մէկ սենեակում պահելն անյարմար է, որովհետեւ թա-ղուհին տարբեր ժամանակներ է ձու ածում: Նւ եթէ մի սենեակում տարբեր ժամանակի ձւիկներ լինին, նոր դուրս եկած, դեռ թոյլ մըջնիկները կը խառնւեն մեծ ձւիկների հետ ու այդպիսով շատ կը դժւարա-նայ ձւերին կերակրելու գործը և անկարող կը լինին յարմար ժամանակին կերակրել ամեն մէկին:

Ահա դրա համար է, որ մըջիւնները միքանի սենեակ են պատրաստում յատկապէս ձւերի համար:


Առաջինում, ինչպէս տեսանք, նոր բերած ձւիկ-ներն են պահւում: Նրբ նրանք աճում, մեծանում են, մըջիւնները փոխադրում են երկրորդ սենեակը, ապա որոշ ժամանակից յետոյ էլ այդ երկրորդից՝ երրորդ սենեակը:

Յանկարծ մի քանի մըջիւններ շտապով վազե-

ցին գէպի երրորդ սենեակի խորքը: Ի՞նչ էր պատահել:—Ահա ինչ.

Միւրմօն ասում էր կարային.

—Ձուն պայթեց, կեղեւը բացւել է, շուա գնանք, գուցէ ուրիշներն էլ պայթեն և հարկաւոր լինի մեր օգնութիւնը:



Մրցիւններ կերակրում են քրթուրներին:

Ճիշտ որ, ձւերից մէկի կեղեւը պայթել էր և մէջը երեւում էր անշարժ քրթուրը: Թրթուրը ոչ աչքեր ունի, ոչ ոտքեր, այլ միմիայն մի գլուխ և մարմին. իսկ մարմինը կազմուած է 12 օղակներից: Թրթուրը չզարգացած մրջիւն է. նա յետոյ պէտք է մրջիւն դառնայ:

Բանւորները հանեցին կեղեւի միջից Թրթուրին և տարան Թրթուրներին յատկացրած սենեակը:

Ուրեմն երբ առաջին սենեակում ձուն զարգանում է, նա ուրիշ սենեակ է տարւում և այդ տեղ երբ ժամանակը գալիս է, պայթում է, իսկ նրա մէջը եղած Թրթուրը հանում, տանում են դրանց համար յատկացրած սենեակը: Այդ սենեակում այլևս ձւեր չեն երևում, այլ բոլորն էլ Թրթուրներ են, որոնք օր օրի վրայ աւելի են զարգանում ու աւելի մեծանում:

Չորրորդ թէ հինգերորդ սենեակում դուք ոչ ձւերի և ոչ էլ Թրթուրների կը հանդիպէք, այլ մոմիայն մրջիւնների սպիտակ կոկոններ: Շատերը սխալմամբ այդ սպիտակ կոկոնները ձւերի տեղ են ընդունում:

Այդ կոկոնների մէջ քնած են լինում կիսազարգացած մրջիւնները: Կոկոնը՝ օրի մէջ քնած է լինում մրջիւնը, հաւսնուկ էլ է անւանւում:

Երբ Թրթուրը քիչ զարգանում է և մի քիչ մրջիւնի նմանութիւն ստանում, նա սկսում է իր շուրջը կոկոն հիւսել: Ինքը մրջիւնը սպիտակ է լինում: Կոկոնի մէջ Թագնուելով նրանք շուտով քնում են. քնում են որ լաւ աճեն, զարգանան. քնում են այնքան, մինչև որ զարթնելու ժամանակը գալիս է:

Սպիտակ մրջիւնը կոկոնի մէջ արդէն մրջիւնի գլուխ ունի, ծալած շոշափուկներ և ծալած ոտքեր: Գլխի վրայ երևում է երկու գորշ կէտ: Այդ մրջիւնի սպազայ աչքերն են: Սպիտակ մրջիւնն անշարժ է կոկոնի մէջ, նա զարգանում է այդտեղ, ուր և ամրանում են նրա մարմնի անդամները:

Ի հարկէ բոլորն էլ միասին չեն զարթնում, այլ հետզհետէ, որովհետեւ միւս սենեակներից բոլորն էլ միաժամանակ չեն բերւել այս սենեակը: Մէկը շուտ է զարգանում, միւսը՝ ուշ:

Միրմօն, Կարան և միքանի բանւորներ հաւաքւել էին կոկոններից մէկի շուրջը: Ուրեմն կոկոնի միջի մըջիւնը զարթնելու վրայ է: Բանւորները պատրաստուում են օգնելու: Նորածին, թոյլ մըջնիկը, մեծակ իր թոյլ ոյժերով չի կարող կոկոնից դուրս գալ, օգնութիւն է հարկաւոր:

Երբ կոկոնի թելերը դժւարութեամբ են հանւում, բանւորները չեն յուսահատուում:

Առհասարակ մըջիւնները երկար ու բարակ մըտածել չգիտեն: Մի բան կանեն, եթէ վատ դուրս եկաւ, չօգնեց, ուրիշ կերպ կը վարւեն, մի ուրիշ միջոցի կը դիմեն. եթէ այդ էլ չօգնեց, մի երրորդ միջոց կը հնարեն... Այդպէս էլ հիմա: Կոկոններից մէկի թելերը կարծես դիտմամբ չէին ուզում բացւել:

Բանւորները զգուշութեամբ կրծեցին կոկոնի մէկ կողմից և մի խորշիկ բաց արին, ապա սկսեցին նրան լայնացնել և այդպիսով ազատեցին մըջնիկին կոկոնից դուրս գալու:

Մի ուրիշ տեղ էլ՝ երկու թէ երեք մըջնիկ դուրս հանեցին կոկոնից:

Կոկոնից դուրս եկած մըջնիկը փորձում է ման գալ, բայց այդ այնքան էլ հեշտ չէ նրա համար: Ո՛վ գիտէ՝ ինչքան է մտածում խեղճը, երբ դուրս է

գալիս կոկոնից: Չորս կողմը մթութիւն է, բայց մըջնիկը էլի չի յուսահատուում: Հետզհետէ նա սկսում է հասկանալ իր շրջապատը:

Բայց մէկ նայեցէք կոկոնից նոր ազատած այն փոքրիկ մըջիւնին: Այս կողմն է անցնում — թրքիկ, յանկարծ մի բանի է դիպչում. միւս կողմն է անցնում — թրքիկ, մի ուրիշ բանի է դիպչում: Խեղճ մըջնիկ: Հիմա եթէ մարդ լինէր, կասէիք՝ խմել — կոնծել է ու հարբած դէս ու դէն է ընկնում: Բայց բարեբաղդաբար մըջիւնները ոչ գինի են խմում, ոչ օղի և ոչ էլ ուրիշ հարբեցնող ու առողջութեանը վնասող խմիչքներ:

Նրանց միակ խմիչքը մի քաղցրանիւթ հեղուկ է, որ ստանում են իրենց «կթի կովերից»:

Հապա, մըջիւններն էլ կթի կովեր ունեն:

Բայց այդ «կթի կովերի» հետ մենք յետոյ կը ծանօթանանք: Երբ որ Միրմօն կամ Կարան գնան նրանց մօտ, մենք էլ կը գնանք տեսնելու:

Հիմա էլի գառնանք մեր հարբածի նմանող մըջնիկին:

Միրմօն ու Կարան մօտեցան և սկսեցին օգնել նորածին մըջնիկին, փայփայել նրան իրանց շօշափուկներով: Ով գիտէ, ասացին՝ «բարի եկար», և ուտելու բան առաջարկեցին նրան:

— Համեցէք, մըջնիկս, ասաց Միրմօն ու բերանում հաւաքած քաղցր հիւթով սկսեց կերակրել նրան:

Օ, ինչպիսի ազահութեամբ է ծծում միջնիկը զովացուցիչ ու աննդարատ հիւթը:

Միշտ այսպէս են անում մըջիւնները: Առաջ ու առաջ քաղցր հիւթերով են կերակրում նրանց, իսկ յետոյ, երբ մըջնիկը փոքր ինչ ամրապնդւում է— այն ժամանակ կոշտ կերակուր են տալիս: Երբ նրանք բաւական ոյժ են ստանում, ման գալ են սովորում, այդ ժամանակ խելացի բանւորները այլևս հիւթերով չեն կերակրում նրանց, այլ հիւթի փոխարէն ցորեն են բերում: Բայց ցորենը չոր ու ցամաք չի լինում: Սովորաբար երբ բանւորները ցորեն են հաւաքում, այդ պաշարը այնպիսի մառաններում են պահում, ուր ցորենը չի կարող չորանալ. ընդհակառակը՝ մառանի խոնաւութիւնը քիչ փափկացնում է նրան և աւելի հիւթալից դարձնում:

Ցորենը խոնաւութիւնից ծլում է, արմատ է ձգում. իսկ թէ ինչու մըջիւնների խոնաւ շտեմաբաններում ցորենը չի աճում, այդ արդէն մըջիւնների զաղտնիքն է և ոչ ոք չգիտէ թէ ինչ են անում, որ ցորենը մնում է խոնաւ ու չի աճում:

Ահա այդպիսի ցորենի ետեից գնաց մեր կարան: Իր հսկողութեան վերջրած մըջնիկն արդէն այնքան էր զարգացած, որ կարող էր ցորենով կերակուրել:

Կարան բերաւ ցորենն ու դրաւ մըջնիկի առաջ: Մըջնիկը դեռ անսովոր էր, բան չէր հասկանում: Նա հաստատ ու համարձակ առաջ չէր կարողանում քայլել:

Մեր կարան՝ որ նրա մօտ կանգնած էր, կարծես ասելիս լինէր.

— Կեր առաջիդ դրած ցորենը:

Մըջնիկը փոքր ինչ շարժեց, բայց ցորենին չմօտեցաւ: Մըջիւնները շուտ բարկանալ չգիտեն: Կարան համբերութեամբ սպասում էր. ցորենը այս կողմն էր տանում, այն կողմն էր տանում, սակայն մըջնիկը դեռ խելաւ էր, բան չէր հասկանում: Կարան մի ուրիշ հնար գտաւ. նրան հասկացնելու համար սկսեց լիզել ցորենը, որ նորածին միջնիկը տեսնի ու ինքն էլ այդպէս սնէ:

Ի հարկէ պատահում է, որ խելացի, ընդունակ աշակերտը հասկանալով թէ ինչ են առաջարկում իրան անել, իսկոյն մօտենում է և սկսում ցորենի համը տեսնել. համն առաւ թէ չէ, էլ պլծաւ. որովհետեւ կը սկսի շարունակ լիզել ցորենը մինչև որ կշտանայ:

Բայց մըջիւնների մէջ էլ լինում է զժւար հասկացող: Կարանի մօտինը հէնց այդպիսի չհասկացող մըջնիկ էր:

Կարան սկսեց ինքը լիզել ցորենը. մըջնիկը գլխի չընկաւ, նոյնիսկ տեղիցն էլ չշարժեց: Կարան շատ համբերեց, բայց երբ տեսաւ, որ աշակերտը չի հասկանում, մօտ գնաց ու սկսեց հրել բթամիտ աշակերտին և այնպէս հրեց, որ մըջնիկի բերանը... դիպաւ ցորենին: Հէնց որ մըջնիկի բերանը հիւթալից ցորենի համն առաւ, անմիջապէս սկսեց լիզել:

Կարան հանգստացաւ, վերջապէս հասաւ նպատակին:

Կարան և իր միւս ընկերները անդադար աշխատում էին կերակրել մըջնիկներին: Մըջնանոցի ներ-

սը նքանց օգնում էին պատանի, արդէն ոյժ առած մըջնիկները, որոնք դրսի աշխատանքը կատարելու համար դեռ թոյլ էին, այդ պատճառով սկզբումը ներսի թեթեւ աշխատանքն էին կատարում. ձրւիկներ էին հաւաքում, նրանց վրայ հսկում, թրթուրներին նայում, հարսնուկներին հետևում, նորածին մըջնիկներին կերակրում...

Կարան մի ուրիշ մըջնիկ էր կերակրում, երբ ներս մտան Ֆազօն ու Միրմօն:

Ֆազօն հարցրեց.

— Հը՛, Կարա, մըջնիկներդ հօ պնդապուլս չեն: Ես բաւական չարչարեցի իմոնց վրայ:

— Ել մի ասի. մէկի վրայ շատ չարչարեցի. սակայն ես չեմ գանգատուում. նրանք դեռ փոքր են. փոքրիկներին պահող-մեծացնողը մեծ համբերութիւն պէտք է ունենայ: Ահա այս սենեակում հասունացած մըջնիկները դուրս կը գան շուտով և կը միանան լոյս աշխարհում աշխատողներին:

Նրանց պատանի ընկերները հիմա արդէն գործի վրայ են: Սկզբում թո՛ղ թեթեւ աշխատանք կատարեն, թո՛ղ մի քիչ էլ անցնի, թո՛ղ նրանց մարմինը լաւ ամրապնդւի, յետոյ նրանք առանց մէր ասելու էլ կը բարձրանան վերև և աւելի ծանր ու մեծ աշխատանքների կը մասնակցեն... Դէ՛ գնացէ՛ք, գնացէ՛ք, հիմա ինձ խանգարում էք... մանաւանդ որ... դուք էր գործ ունէք, հօ պարապ չէք:

Հազիւ այդ խօսակցութիւնը վերջացած, այն է՝ Միրմօն ու Կարան ուզում էին հեռանալ, երբ ձւիկ-

նեքի սենեակները բանւորներ թափեցին, մօտեցան աշխատող ընկերներին, շօշափուկները իրար խփեցին... Երբ մըջիւնները սկսեցին յուզել, ապա խռամբ-խռամբ դուրս վազեցին սենեակներից... Սրահների այս ու այն կողմից դուրս թափեցին զինւորները և բարձրացան վերնայարկերը: Ի՞նչ էր պատահել: Ահա՛ ինչ: Վերևում, լոյս աշխարհում, մըջնանոցի մուտքի առաջ բազմաթիւ մըջիւններ թափւել էին ինչ որ մի անգին միջատի վրայ, այս ու այն կողմի էին քաջքշում և ուզում էին մըջնանոց մօցնել: Բայց միջատը դեռ կենդանի էր, վտանգուոր էր նրա գլուխը, որի վրայ երևում էին երկու սև, բաւական խոշոր ծնօտներ: Այդ միջատը՝ մայրահան րզէգի թրթուր էր...

Թէև իր ուժեղ ծնօտներով միջանի մըջիւնի մէջ-ներից կիսեց, բայց մըջիւնները չէին վախենում, ալ նորից ու նորից էին յարձակում նրա վրայ ու վերջը թրթուրի փափուկ մարմինը այնքան ծակոտեցին իրանց սրածայր ծնօտիկներով, որ թրթուրը միջանի անդամ կծկեց, ապա մի վերջին անգամ էլ կծկւելով անշարժացաւ:

Մըջիւնները իրենց սպանւած ընկերներին առաւ ան մըջնանոցից հեռու թաղեցին: Մըջիւնների մեծ մասը զբաղւեց թրթուրին տեղափոխելով...

Երբ Կարան, Ֆազօն ու Միրմօն նորից հանդիպեցին ձւիկների սենեակներում, Կարան հարցրեց Միրմօյին.

— Միրմօն, դու առաջ վազեցիր, մէկ ասան, այդ

թնչպէս եղաւ որ մեր մըջնանոցի առաջ յանկարծ մայիսեան բզէզի թրթուր երևաց...

— Թրթուրը մեր մըջնանոցի մօտ չի եղել, — ասաց Միրմօն, — այլ մեր քաջ բանւորներից մէկն է ընկերների հետ քաջ տալով բերել հեռու տեղից: Նա շատ խելացի է վարւել: Հէնց որ տեսել է թրթուրին, ցանկացել է իւղալի պաշար բերել մեզ համար, և եկել է մի քանի հոգի վերցրել ու յետ գնացել, որոնք միասին բռնել են թրթուրին ետեւից ու սկսել են քաջ տալով մըջնանոց բերել... Ասում է, քանի-քանի անգամ, երբ թրթուրը կծկւում էր, քիչ էր մնում նրա ծնօտների արանքն էին ընկել, վայրկենապէս կը կիսւէին... Հէնց որ բերել են մըջնանոց, պահակ զինւորներն ու բանւորները վրայ են թափւել ու էլ չեն նայել թէ որ կողմից թրթուրի վրայ ընկնեն. այդ է պատճառը որ շատերը զուր զոհ գնացին, բայց էլի քիչ զոհով լաւ պաշար ձեռք բերինք:

Կարան զարմացաւ:

— Տեսա՞ր, Միրմօ, թէ որքան ուժեղ են այդ բանւորները: Նրանց ասած տեղը շատ հեռու է... Եւ այդքան հեռու ճանապարհը նրանք կարողացել են մենակ իրենցից մի քանի անգամ մեծ թրթուրին քարշ տալով բերել մեզ մօտ...

Միրմօն չէր սխալւում: Թրթուրը հեռու տեղից էր բերւած և բերողներն էլ մի քանի մըջիւն էին:

ՄՐՋԻԿՆՆԵՐԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ: ՀՈՒՆՁԸ

Անցաւ բաւական ժամանակ. հասաւ այն րո-

պէն, երբ առաւօտեան վաղ գիւղերից դէպի "արտերը պիտի շտապէին գիւղացիները:

Կարան մի օր հանդիպեց Միրմօին և ասաց.

— Միրմօ ջան, հապա չգնանք մեր տեսած արտը. հնձելու ժամանակ է. գնանք, քանի երկոտանի ափդահան բոլոր արտը չի հնձել:

— Կարա, ես էլ հէնց դրա մասին էի մտածում. գնանք մեր ընկերներին իմաց տանք:

Երբ Կարան և Միրմօն մօտեցան Միմային և յայտնեցին ցորենի ձմեռւայ պաշար հաւաքելու մասին, Սիման ասաց.

— Հա, Միրմօ, ինքս էլ դրա մասին էի ուզում քեզ յայտնել: Ժամանակն է:

Հանդիպեցին բաւնոր Փագօին:

— Հը՞, Փագօ, ինչ կասես, ժամանակը չէ:

— Օ՛, այո՛, — համաձայնեց Փագօն, — ես էլ այս քանի օրերս մտածում էի, որ վատ չէր լինի, եթէ մեր հունձն սկսէինք:

Բանից դուրս եկաւ, որ մեծամասնութիւնը արդէն մտածում էր հունձի մասին:

Իսկ ով կարծում էր, թէ դեռ ժամանակը չէ, ձայն չէր հանում, հակառակ չէր խօսում, ու վերջը համաձայնւում էր ընկերների հետ: Կարող էր ասել թէ ժամանակը չէ, առանց հաստատելու թէ ինչու, երբ համարեա բոլորն էլ մտադիր էին հունձի գնալ:

Յաջորդ առաւօտ վաղ զարթնեցին և ճանապարհ ընկան: Միրմօն և Կարան առջևից էին գնում: Միրմօն ցանկանում էր իր տեսած արտը գնալ:

Արդէն մօտենում էին: Հեռից փայլում էր ոսկեծածան արտը և տատանում ջրի կռակների նման: Հասկերը միասին թեքում էին առաջ ու առաջ, կռակները գալիս էին ու գալիս անվերջ...

Մօտեցան արտին, մեծ ոգևորութեամբ առաջ վազեցին, մտան արտը: Մ, որքան հարուստ է, որքան խիտ է այս տարւայ արտը:

Երկար-բարակ սպասելու սովորութիւն չունէին, իսկոյն գործի կացան: Գետնին շատ քիչ ցորեն դրտան: Կարան մօտեցաւ Միրմօին ու ասաց.

— Միրմօ, չե՞ս ուզում բարձրանալ վերև:

— Հէնց ես էլ այդ էի ուզում անել, — ասաց Միրմօն. — Կարա, դու գնա ուրիշ ցօղունի վրայ բարձրացիր: Ես էլ այն հասկին, որ տեսնում ես, այն մեծ հառկին պիտի հասնեմ:

Միրմօն սկսեց բարձրանալ. բարձրացաւ մինչև ցանկացած հասկը. միքսնի ուրիշ մրջիւններ էլ հետևեցին նրան:

Միրմօն ու ընկերները կրծում էին պատեանները և ցորենը միջից վայր թափում ներքև, ուր բանւորները իսկոյն վերցնում էին ընկած ցորենի հատիկները:

Սյդպէս շարունակում էր հունձը: Մանգաղները դեր էին կատարում մրջիւնների ծնօտիկները: Ցորենը հասկից պոկւելով, գլորւում էր ներքև:

Ցորենի նոր հատիկները ընկնում էին ու ընկնում, իսկ ներքևում սպասող մրջիւններն անմիջապէս հաւաքում ու տանում էին մի կողմը:

Մէկ տեղ մրջիւնները թէև շատ էին չարճաբ-

ւում, բայց աշխատանքը անյաջող էր անցնում. որքան աշխատում էին, բայց հասկի միջից ցորենը չէին կարողանում դուրս հանել: Մի քանի հոգով բարձրանալ հասկի վրայ անկարելի էր, որովհետև ծանրութիւնից ցօղունը կարող էր կոտրւել և մրջիւններն էլ կը վնասւէին:

Երբ բան դուրս չեկաւ, բանւորներն իջան ներքև և մի փոքր խորհուրդ տեսնելով իրար հետ, մօտեցան ցօղունին և սկսեցին կրծել: Կրծում էին, հա՛ կրծում: Բաւական կրծեցին, ցօղունն սկսեց թեքւել և այն է պիտի ընկնէր... բայց այդ միջոցին վերևում, հասկի վրայ երևաց մեր Կարան:

Թէ այդ ինչպէս եղաւ, որ նա մնաց այնտեղ, ոչ ոք էլ չհասկացաւ: Արդէն ուշ էր, էլ Կարան ներքև իջնել չէր կարող: Հասկը թեքւեց և... թրլը խկ—վայր ընկաւ, Կարան էլ հետը: Մի քանի մրջիւններ վազեցին Կարային օգնելու. աշխատեցին նրան ծանր հասկի տակից հանել: Միրմօն ներքևում էր. երբ իմացաւ իր ընկերով ընկնելու մասին, իսկոյն վազեց մօտը:

— Ի՞նչ պատահեց, Կարան, — հարցրեց նա, — հօշատ չվնասեցիր:

Կարան հազիւ էր ոտքի վրայ կանգնում, ուշքն էլ վրան չէր. ընկերները նրան պահում էին: Կարան մոլորւած հայեացքով դիմեց Միրմօին.

— Դու ճի՞շտ ես, որ ինձ հետ խօսում ես... Ա՛խ, Միրմօ, դժւ ես... Ոչինչ, ոչինչ, միայն մի փոքր վախեցայ... Բայց այս ինչ է, չեմ զգում, թէ որտեղ եմ

գտնւում...այդ դժուար է, Միրմո...Այս անգամ է...

—Ե՛ս եմ, ես:

Միրմոն մի փոքր զարմացաւ: Ի՞նչ էր պատահել Կարային, որ նա դժուարութեամբ էր ճանաչում ընկերին:

Միրմոն մօտեցաւ Կարային, մի-փոքր թափահարեց նրան: Այն՝ ինչ որ նա տեսաւ, այնքան էլ ուրախալի բան չէր:

—Ա՛, Կարա, այդ ինչո՞ւ շօշափուկներդ յանկարծ թեքւեցին. պա՛, պա՛, պա՛... վիրաւորւել ես: Երկուսն էլ քիչ ջարդւել են: Բայց ոչինչ, վտանգաւոր չէ. լաւ է, որ բոլորովին չեն կոտորւել: Կը լաւանան... անի, անի հետս գնանք, վերքդ պիտի լիզել, որ շուտով լաւանայ:

Միրմոն տարաւ նրան մի ապահով տեղ:

Բանւորները վաղուց թափւել էին ընկած հասկի վրայ: Կարայի դրութիւնը նրանց բոլեապէս միայն հետաքրքրեց, յետոյ իսկոյն դիմեցին հասկին և լաւ շատ լաւ, մինչև վերջին հատիկը մաքրեցին:

ՎԵՐԱԴԱՐՁ: ԱՆՁՐԵՒ Է ԳԱԼԻՍ: ՈՒՐԱԽԱԼԻ ԼՈՒՐ:

Յանկարծ եղանակն սկսեց ցրտել: Արևի ջերմութիւնը թուլացաւ, նրա ճառագայթներն այլևս չէին երևում: Ամպը եկել էր ու բռնել արևի առաջը: Քամին սկսեց սաստկանալ: Հասկերը հիմա հանդարտ ու մեղմ կոհակների պէս չէին տատանւում, այլ ծովի նման էր արտը, կատաղի, փրփրալից ծով:

նման. ալիքները մեծ գայլոյթով իրար վրայ էին ընկնում:

Շատ շուտ երկինքն ամպերով ծածկեց: Անպայման անձրև պիտի գար:

Հէնց որ հողմն սկսեց սովորականից ուժեղ փուշել և եղանակը քիչ ցրտեց, մըջիւնները նախազգացին եղանակի փոփոխութիւնը: Իսկոյն աշխատանքը դադարեցրին: Իւրաքանչիւրը վերցրեց մի-մի ցորեն և բոլորը միասին ճամբայ ընկան:

Այս անգամ ընտրեցին մի ուրիշ, աւելի ապահով ճանապարհ: Այդ ճանապարհն անցնում էր անտառի միջով, ուր քամին աւելի թոյլ է լինում. ճանապարհը պաշտպանւած էր խիտ բոյսերով, ուստի բաւականին նեղ էր:

Մըջիւններն շտապում էին: Բանւորների միջին երևացին Միրմոն և Կարան: Կարան ծնօտիկներում բան չունէր բռնած. խեղճի շօշափուկները բոլորովին ուղիղ չէին կանգնում. հէնց որ քիչ շարժում էր, իսկոյն թեքւում էին: Դրա համար էլ Կարան այնքան հաստատ չէր քայլում: Միրմոն նրան օգնում էր: Բանւորներին շրջապատած գնում էին զինւորները, որոնք պատրաստել էին իրենց սրածայր ծրնօտիկները և առանց տատանւելու կռիւի դուրս կը գային ամեն մի բռնի:

Այս ճանապարհը մեր մըջիւններին շատ լաւ յայտնի էր, որովհետև հէնց իրենք էին շինել: Վերադառնալի դէպքում միշտ այս ճանապարհով էին վերադառնում տուն: Որոշ տարածութեան վրայ, ճա-

նապարհի կողքին հանդիպում էին հողից ու բոյսից շինած պատսպարանների: Անձրեւը դէպքում, վրտանգի ժամանակ, մտնում էին այդ ընդարձակ պատսպարանները և պաշտպանւում: Այստեղ շատ անգամ թողնում էին նաև հաւաքած պաշարը, որոշ ժամանակ ի հարկէ:

Մեր մրջիւնները երկար չգնացին. յանկարծ մի սաստիկ քամի բարձրացաւ, ամբողջ անտառն աղմկում էր, յետոյ սկսեց քիչ անձրև կաթել, մի քիչ էլ կաթեց... այնուհետև այնպիսի կատաղի կերպով տեղաց, որ մրջիւնները մի բոպէ շփոթեցին, չգիտէին ո՞ր գնան: Լաւ է, էլի բոյսերը պաշտպանում էին նրանց անձրևի ոյժից, բայց և այնպէս առաջ շտապեցին և բախտի բերմամբ հասան իրենց պատսպարաններից մէկին. բոլորն էլ ներս մտան ու մուտքը լաւ փակեցին:

Այդտեղ թագնւած մնացին բաւական ժամանակ: Անձրևը այնպէս էր թափւում, որ կարճ միջոցում չորս կողմը արագընթաց առւակներ գոյացան:

Բայց անձրևը ինչպէս յանկարծ սկսեց, այնպէս էլ յանկարծ դադարեց: Թխպոտ, անձրևային ամպերը, որոնք առաջացրին այդ անձրևը, շուտով հեռացան. քամին տարաւ նրանց ուրիշ կողմեր և երկինքը նորից կապտեց:

Մի գունդ սև, մոխրագոյն ամպեր էին, արագ եկան ու արագ էլ անցան:

Նորից երևաց արևը, որի ճառագայթները մեզմփայլեցին գոյացած բազմաթիւ առւակների մակերևոյթի վրայ:

Մրջիւններն ուրախացան, որ այդպէս շուտ ազատեցին անձրևի ձեռքից, դուրս եկան թագստից: Մի փորձանքից ազատեցին, բայց դժբախտաբար մի ուրիշ, աւելի մեծ փորձանքի հանդիպեցին: Այդ անձրևից գոյացած առւակներն էին:

Մրջիւնները շարունակեցին կիսատ թողած ճանապարհը: Գնացին, գնացին ու յանկարծ... կանգ առան. էլ յառաջ գնալու հնարաւորութիւն չկար: Նրանց ճանապարհը կտրում էր մի առւակ: Ոչ ոք չէր համարձակւիլ ջրի միջով անցնել:

Օ, մրջիւնները ատելով ատում են ջուրը, որովհետև եթէ ջուրն են ընկնում, էլ ազատել չեն կարողանում:

Հիմա ի՞նչ անէին: Խուժը-խուժը այս կողմ, այն կողմ դիտեցին, լաւ հետազօտեցին, բայց առւակից անցնելու լաւ, յարմար տեղ չգտան:

Առւակի ափով գնացին մի փոքր վերև: Այդ կողմերը առւակի երկու եզերքին բարձրանում էին զանազան բարձր խոտեր, բոյսեր: Նրանցից մի քանիսը երկու ափից թեքւում էին և իրաք շատ մօտենում: Այնքան մօտ էին իրար, որ կարելի էր նրանց վրայով մէկ ափից միւսն անցնել: Մրջիւններից մի քանիսը մօտեցան այդ բնական կամուրջին. բայց իսկոյն չբարձրացան, այլ դեռ մի քանի բոպէ կանգնեցին, լաւ դիտեցին առւակի հոսանքը, բարձր վտանգաւոր կամուրջն էլ հետազօտեցին: Շատ չտեսեց նրանց դիտողութիւնը:

Մըջիւններէից մէկը բարձրացաւ վերեւ, գնաց...
գնաց... ու... անցաւ միւս ափը: Այդ որ տեսան
միւսները, ոգևորեցին և մոռանալով զգուշութիւ-
նը, իրար ետեւից սկսեցին բարձրանալ: Ահա առաջին
մըջիւնը հասաւ բոյսի ամենավերին մասին: Մըջիւ-
նը սպասում էր յարմար ըսպէի, որ միւս ափի բոյ-
սի ծայրը անցնի... ահա անցաւ և նոյնպէս իջաւ
հակառակ ափը:

Անհամբերութիւնից ու շտապելուց ցօղունի
ծայրին այնքան մըջիւն հաւաքեցին, որ բոյսը
թեքեց և ծայրն ընկաւ առակը: Նրա վրայ եղած
մըջիւնները ևս թափեցին առակը, որի ջրերն ընկած
մըջիւններին իսկոյն տարան հեռով, հեռով...

Իսկ ով իսկոյն իջել էր ցօղունից, նա ազատ-
ւել էր փորձանքից:

Քանի որ այս վտանգաւոր կամուրջի վրայ էր
մըջիւնների մի մասը, դեռ դժբախտութիւնից քիչ
առաջ ֆնացեալ մըջիւնները քիչ էլ վերեւ գնալով
գտել էին հիանալի, ամուր և աւելի ապահով կա-
մուրջ:

Այդ կամուրջը ծառի ճիւղ էր, որ գուցէ խիստ
քամու ժամանակ կոտրւել էր ծառից և ընկել առ-
ւակի վրայ:

Դէ, ի հարկէ, մըջիւնները շատ ուրախացան,
սկսեցին իրար ետեւից անցնել: Այնքան էին շտա-
պում, որ կամուրջի վրայ մըջիւնները շատ անգամ
իրար վրայով էին անցնում: Ի հարկէ միջա-
նին անզգուշութիւնից էլի ջուրն ընկան:

Այն մըջիւնները, որոնք մեր նկարագրած առա-
ջին վտանգաւոր կամուրջի մօտ էին, երբ կամուրջը
փլեց, իսկոյն հեռացան այդտեղից և եկան աւելի
ապահով կամուրջի մօտ:

Թէև մըջիւններն անցան միւս ափը, բայց վա՛յ
այն անցնելուն. իրար կոխտելով, իրար հրելով, ե-
ղած ցորենի պաշարի մեծ մասը կորցրին. շատերը
հէնց դիտմամբ թողել էին հին ափին, որովհետեւ զըժ-
ւար էր ծանրութիւնով անցնել և այն էլ այնպիսի բե-
ռով, ինչպէս ցորենն էր:

Վերջապէս մի կերպ նորից գտան իրանց ճանա-
պարհի շարունակութիւնը և առանց դադարի ուղևոր-
ւեցին տուն: Տանը Կարային և Միրմօյին մի ուրա-
խալի լուր էր սպասում:

Երբ մըջիւնները հասան տուն և բոլորն էլ յոգ-
նած ներս մտան մըջնանոց, յանկարծ Միրմօյի և
Կարայի առաջը կտրեց մի մըջիւն: Երեքն էլ իրար
մօտեցան և իրար ողջունեցին: Կարան լաւ չիմացաւ
ով էր, բայց Միրմօն իսկոյն ճանաչեց.

— Կոնօ, այդ դ՞ու ես...

— Ե՛ս եմ... ես... Կարա...

— Օ՛, Կոնօ, Կոնօ...

Նորից իրար ողջունեցին, ծնօտիկներով սիրալիբ
կերպով շփեցին իրար:

Այն, ընթերցող, այդ մեր Կոնօն էր, Միրմօյի և
Կարայի մտրրիմ ընկերը: Այն Կոնօն, որ գերի ըն-
կաւ թշնամիների ձեռքը: Երկար ժամանակ Միրմօն
և Կարան զրկւել էին նրա ընկերութիւնից:

—Ա՛, Կոնսօ—դիմեց նրան ուրախացած Միրմօն—
այդ ո՞ր անյայտ ոյժը բերաւ քեզ այստեղ. ի՞նչպէս
ազատուցիր... Կեցցես, Կոնսօ:

—Կեցցես, Կոնսօ—ասաց նաև Կարան. ուրեմն այդ
դո՛ւ ես. դո՛ւ, Կոնսօն. ներիր, որ լաւ չկարողացայ քեզ
ձանաչել... ամբ, շօշափուկներս...

—Այդ ի՞նչ է եղել քեզ, հարցրեց Կոնսօն, երբ
տեսաւ, որ Կարան այնքան էլ աշխոյժ չէր շարժուում
և շօշափուկներն էլ վիրաւորւած էն:

—Է՛, Կոնսօ, մի ուրիշ անգամ կը պատմեմ.
բայց դու ան ատա, թէ ի՞նչպէս եկար:

—Գնանք ներս, գնանք, յետոյ:

Երեքն էլ իշան ներքևի յարկերը:

Միրմօն և Կարան ուրախութիւնից մոռացան
այդօրեայ փորձանքները:

Միւս մըջիւններն էլ իմացան Կոնսօյի գալստեան
մասին: Ամենքն էլ հաւաքւել էին նրա շուրջը և հարց
ու փորձ էին անում: Կոնսօն բոլորին էլ պատասխա-
նում էր:

Թէև ուրախ էր Կոնսօն, բայց էլի երևում էր, որ
շատ էր տանջւել. նա շատ յոգնած ու թուլացած
էր երեւում...

Իսկոյն Կոնսօյին հրաւիրեցին ճաշելու: Նրա հա-
մար մառաններից հիւթալից ցորեն բերին: Յետոյ
Միրմօյի և Կարայի հետ գնացին կովերի մօտ նրանց
կաթը խմելու:

ՄՐՋԻԻՆՆԵՐԻ ՈՒՆԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆ

Ի հարկէ ատօք լիքը հասկերով արտը մըջիւն-
ները չմոռացան: Առաջին հունձը, ինչպէս տեսանք,
անյաջող անցաւ: Անձրևի պատճառով հաւաքած
պաշարի չնչին մասը միայն կարողացան տեղ
հասցնել:

Երկրորդ անգամ գնացին հունձի: Բաւական շատ
ցորեն հաւաքեցին: Վերադարձին նրանց մի դէպք
պատահեց, որ չանցաւ առանց զոհերի:

Մըջիւնները՝ ցորենը ծնօտներում բռնած անհոգ
քայլում էին առաջ: Երկինքը բոլորովին պարզ էր:
Միրմօն, Կարան և Կոնսօն միասին էին քայլում և իրանց
զլիւով անցածները պատմում իրար:

Անտառի մօտով էին անցնում: Արդէն սկսել էին
հեռանալ անտառից, երբ յանկարծ Միրմօն կանգ ա-
ռաւ: Կարան և Կոնսօն նոյնպէս կանգ առան, թէև
չգիտէին ինչո՞ւ համար:

Միրմօն հրեց Կոնսօյին:

—Կոնսօ,—ասաց նա,—սպասիր, դո՛ւ էլ Կարա-
մի՛ք շտապիլ. թո՛ղ միւսներն առաջ անցնեն, եկէք
մենք հանդարտ գնանք: Եթէ շտապենք, այն ժամա-
նակ այլևս չենք կարող հասկանալ, թէ այդ ի՞նչ բան
էր, որ մեզ վախեցրեց:

Երեք ընկերները քայլում էին հանդարտ ու շարու-
նակ շօշափուկները շարժելով: Զինուորներն էլ կար-
ծես անհանգիստ դրութեան մէջ էին:

Մըջիւններն ուշադրութիւն չդարձրին Կարայի և Միրմօյի վրայ. նրանք առանց դադարի առաջ անցան:

Անցնում էին թփերի, խոտերի միջով: Մէկ-մէկ ճանապարհին հանդիպում էին ձագառաձև փոսիկներ:

Մըջիւնները հեռից զգալով այդ, ամենայն զգուշութեամբ խուսափում էին այդ փոսիկներից և անցնում ուրիշ կողմով:

Որքան աշխատեցին հեռու լինել նրանցից, բայց չկարողացան: Ելի, էլի այդ բզեզները: Թէ ինչո՞ւ, չիմացեց, բայց երկու թէ երեք արագավազ բզեզներ վազեցին մըջիւնների միջով: Միրմօն, Կարան և Կոնօն վախեցած առաջ վազեցին: Մըջիւնների մէջ իրարանցում սկսեց: Այս կողմը վազեցին, այն կողմը վազեցին, մի խօսքով՝ գլուխները կորցրած շեղեցին սկզբնական ճանապարհից: Վազեցին առաջ փորձանքից ազատելու համար, իսկ երբ երկիւղից մի փոքր հանգստացան, տեսան, որ ընկել էին մի շատ անապահով տեղ: Նրանցից շատ մօտ երևում էին շարագուշակ փոսիկները: Որ կողմն էլ գնային, դարձեալ այս կամ այն փոսիկի մօտով պիտի անցնէին:

Ինչ արած, վաղ թէ ուշ պիտի հեռանային. ուստի սկսեցին փախչել, բայց բոլորին չվիճակեց ազատել: Միրմօն անցնում էր փոսիկներից մէկի մօտով, յանկարծ մի բան նկատեց և երկիւղից դողաց:

—Հօպ—մէկ ուրիշ փոսիկի վրայ էլ զոհեց Միրմօյի ընկերներից մէկը ևս:

Օ, ինչպէս էր վազում Միրմօն: Կայծակի նման:

Քիչ էր մնացել ինքն էլ զոհէր. պատահամբ ընկաւ փոսիկներից մէկի եզրի վրայ, ոտքերի տակի հողը տատանեց. Միրմօն սկսեց ներս ընկնել, բայց ոյժերը հաւաքեց և... դուրս նետեց բլրակից: Ազատեց: Կարան և Կոնօն երկիւղից թուլացած շտապում էին Միրմօյի յետևից: Մի կերպ հեռացան վտանգաւոր վայրից և ազատ շունչ քաշեցին:

—Կոնօ,—խօսեց Միրմօն,—Կոնօ ջան, Կարա...
օխ, օխ, օխ, ինչպէս վախեցայ, վերջապէս ազատեցինք այդ վիշապից: Օ, որքան վախեցայ: Տօ, այդ ինչ դադանացել են: Գլուխը ցցում է ու հօպ, ներս է քաշում... Գնանք, գնանք... Կարա, Կոնօ, դէ, վազենք...

Այդ ի՞նչ վիշապի մասին էր ասում Միրմօն: Ես էլ շատ հետաքրքրեցի. ինչո՞ւ այդքան մեծ երկիւղ ազդեց մըջիւնների վրայ. ապա գնամ տեսնեմ:

Ահա և փոսիկներից մէկը: Դա մի խորշ էր հողի մէջ: Հողը փխրուն էր և ձագառաձև: Քրքրեցի փոսիկը. օ, մըջնառիւծ կար այնտեղ. մըջնառիւծ... Հանդարտ եղիր, պ. մըջնառիւծ: Ապա դուրս եկ բնակարանիցդ: Դէ լաւ, նազ մի անիլ, դուրս արի և մէկ փորձիր կուելու, առաջդ մըջիւն չէ, որ հեշտութեամբ լափես:

Դուրս եկաւ մի մըջնառիւծ...

Ահա սա է մըջիւնների ամենաոխերիմ թշնամին:

Առաջս մըջնառիւծի թրթուրն է, որ անշափ շատ մըջիւններ է ոչնչացնում:

Կարճ է նա, քիչ լայն, ձևաձև և յօգաւոր, օդակաւոր մարմնով: Ունի 6 ոտք, երկար ուժեղ ծնօտ-

ներ: Ահա այդ թրթուրն է պատրաստում ձագառաձև թակարդը, որսում է միջատներ և մանաւանդ մրջիններ: Նա խրուում է ձագառի ներսը, հողի մէջ, գլուխը դուրս ցցում: Նրան այնքան էլ հեշտ չէ նկատել, որովհետեւ գոյնը հողի գոյն է: Հէնց որ փոսիկի եզրին մրջին է երևում, թրթուրն աւելի է դուրս ցցում գլուխը և հօպ... մրջինը ընկնում է նրա մահաբեր գիրկը:

Մրջինը, երբ պատահմամբ ընկնում է փոսիկի վրայ, զգում է, թէ ինչպէս ոտքերի տակի փխրուն հողը շարժւում է, շարժւում և յանկարծ անսպասելի կերպով ընկնում է մրջնառիւծի ձեռքը:

Մրջնառիւծը հէնց որ փոսիկի եզրին մրջին է տեսնում, իսկոյն ռմբակոծում է նրան հողի գնդակներով. այդ գնդակների շնորհիւ մրջինը հետզհետէ գլորւում է ցած, մրջնառիւծն էլ հէնց այդ է ցանկանում:

Եւ իզուր չէր, որ վախենում էին մեր մրջինները՝ Կարան, Միրմօն և Կոնօն: Էլի լաւ է, որ երեքն էլ ազատւեցին: Արդէն տուն էին հասել: Տանը մանրամասն պատմեցին դժբախտութեան մասին: Զորս թէ հինգ մրջին էր զոհւել: Այս անգամ էլ հունձը չյաջողեց:

Բայց մրջինների տրամադրութիւնը ամենակին չփոխեց և շատ շուտով մոռացան այդ դժբախտ դէպքը և էլի ուրախ-ուրախ դիմեցին իրենց մշտական աշխատանքին:

ՄՐՋԻՆՆԵՐԻ ԿԹԻ ԿՈՎԵՐԸ: ԿՈՆՕՅԻ ՊԱՏՄՈՒ- ԹԻՒՆԸ ՍՏՐԿԱՏԷՐ ՄՐՋԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միւս օրը շատ տաք էր դուրսը: Արեւ շատ էր այրում. այդ պատճառով էլ մրջինները դուրս չեկան աշխատանքի: Մրջնանոցում եղած գործը անում էին, իսկ ոմանք էլ անգործ հանգստանում էին, որ երեկոյեան դէմ դուրս գնային աշխատելու:

Կարան, Միրմօն և Կոնօն եղած աշխատանքը վերջացրին և վճռեցին մի լաւ բան ուտել, վրան էլ կաթ խմել, որ զովանան: Հիւթալից ցորենը լիզելուց յետոյ, երեքն էլ գնացին այն սենեակը, որտեղ պահւում էին մրջինների կովերը:

Կարան երեկանից իրեն լաւ էր զգում, որովհետեւ Միրմօն և Կոնօն լաւ էին լիզել նրա վերքերը և յատուկ իրենց յայտնի հիւթերով մեղմացրել սաստիկ ցաւը:

Երեկանից կովերը մրջնանոցում էին, մրջնանոցի մօտ եղած արօտատեղում՝ խոտերի և ծաղիկների վրայ. այդտեղ կերակրւում էին ծաղիկների հիւթերով: Հէնց որ երեացել էին անձրևի նշանները, բանուորներն շտապել էին կովերին ներս տանել:

Հիմա, ընթերցող, երևի ուզում ես իմանալ թէ այդ ինչ կովեր են: Ահա ասեմ: Դրանք նոյնպէս միջատներ են, ի հարկէ մրջիններից շատ փոքր: Դրանց աֆիս են անւանւում: Այդ փոքրիկ ձևաձև միջատները անց են կացնում իրենց կեանքը բոյսերի

վրայ՝ ծաղիկների, ձիւղերի, տերեւների վրայ: Աֆիսները կարող են քաղցր հիւթեր արտադրել, մի շատ համեղ հիւթ: Մրջիւնները պատահամամբ իմացան այդ, և այդ օրւանից սկսեցին վայրի աֆիսներին որսալ և ընտանի դարձնել: Ընտանի աֆիսների համար թփերի, ծառերի տերեւախիտ ճղները վրայ լաւ տնակներ են շինում: Կերակրում, փայփայում են նրանց և ամեն կերպ աշխատում, որ աֆիսը անուշի պակասութիւն չունենայ:

Ի հարկէ աֆիսներին էլ այդ դուր է գալիս, վերջը սովորում են իրենց տէր-մրջիւններին և չեն փախչում նրանցից: Ինչո՞ւ փախչեն, քանի որ մրջիւնները առատ-առատ կերակրում են իրանց. ուստի և իրանք աֆիսներն էլ մրջիւնների հոգացողութիւնը ամենայն սիրով վարձատրում են: Երբ մրջիւնը հիւթ է կամենում, աֆիսը իսկոյն հիւթ է արտադրում: Երկու կողմերն էլ իրար փոխադարձաբար օգնում են:

Երբ լաւ, արեւային եղանակ է լինում, մրջիւնները այդ կթի կովերին տանում են հիւթալից ծաղիկների վրայ արածացնելու: Եթէ թշնամի մրջիւնները կամ որեւէ ուրիշ միջատ յարձակեն աֆիսի վրայ, մրջիւնները՝ այդ կովերի տէրերը, իրենց կեանքը կը զոհեն նրանց պաշտպանելու համար: Կովերի վրայ զինւորները շատ լաւ են հսկում: Պատահում է, որ այդ կովերի համար երկու թշնամի մրջնային ընտանիքներ ահագին պատերազմ են ունենում:

Ահա այդ կովերին էին երէկ բանւորները արօտատեղիից բերել ներս մրջնանոցը, որ նրանք անձրեկի շրերի մէջ չխեղդեն:

Ուրեմն, այսօր Միրմօն, Կարան և Կոնօն վերջացնելով ցորենի կերակուրը, մտել էին կովերի սենեակը: Իւրաքանչիւրը մօտեցաւ մէկ կովի:

Տեսնենք թէ ինչով են կովի նամանում: Հիմա պիտի նրանց «կթեն»:

Մրջիւնները իրանց առաջի ոտքերով երբ մեղմ դիպչում են աֆիսի փորին, աֆիսն իսկոյն արտադրում է անուշաբոյր և քաղցր հիւթ: Նորից կովի փորին դիպչեն թէ չէ—էլի հիւթ կարտադրի: Ուրեմն իսկապէս որ կթում են աֆիսներին, որոնք հլու հնազանդութեամբ տալիս են մրջիւններին ցանկացած հիւթը:



Մրջիւնները կթում են աֆիսներին:

—Օ՛խայ... ժխայ—ասաց Կոնոն—այս ինչ լաւացել է մեր կովերի կաթը. քանի ժամանակ է համը չէի տեսել. կարօտել էի...

Կարան խմեց, խմեց ու կովին տարաւ իր տեղը և մի ուրիշ կով բերեց:

Միրմօն այդ որ տեսաւ, մի փոքր զայրացաւ:

—Էհէ, Կարա, եղա՛ւ այդ. եթէ որ ամեն մէկս երկու երկու կով կթի, հապա մնացածները, հապա մեր միւս ընկերները:

Բայց Միրմօն հազիւ էր վերջացրել իր այդ խօսքերը, երբ ներս մտան մի քանի ուրիշ բանուորներ:

—Ի՞նչ էք անում այստեղ, հարցրեց բանուորներից մէկը:

—Կով ենք կթում, հիւթ ենք խմում,—ասաւ Միրմօն.—իսկ դուք ի՞նչ էք կամենում:

—Մենք էլ հիւթ պիտի տանենք թագուհու համար. լաւ կովերից պիտի ընտրենք:

Միրմօն, Կարան և Կոնոն փորձերը ուռած դուրս եկան:

—Օ՛ֆ, Միրմօն ջան, փորըս, գանգատեց Կարան:

—Ա՛յ, տրաքւեա դու, ագահ, զայրացաւ Միրմօն. ինչո՛ւ էիր այդքան խմում... Դէ, Կոնօ, հիմա գնանք մի տեղ նստենք, դու էլ պատմիր, թէ որտեղ էիր և ինչպէս ազատեցիր:

Ընտրեցին մի գով տեղ: Ուրիշ մըջիւններն էլ միացան և Կոնոն սկսեց իր պատմութիւնը:

—Դէ, բոլորդ էլ գիտէք, որ ես գերի ընկայ:

Այնքան հարածեցին, որ չգզացի, թէ ինչպէս տաւան իրենց բնակարանը: Երբ ուշքի եկայ, տեսայ ընկած եմ մի սենեակում: Առաջին օրը այդտեղ անցաւ: Երկրորդ օրը ինձ տարան աշխատանքի և ես մտիպած էի աշխատել: Նայում էի շուրջս և ի՞նչ տեսնում. մեր տէրերը, երեակայեցէք, անգործ շրջում էին մըջնանոցի առջև: Բոլոր աշխատողներս ստրուկներ էինք: Հող, սերմեր կամ տարբեր տեսակի մըջիւնների թրթուրներ էինք կրում: Բանից դուրս էր գալիս, որ նրանց սենեակները լիքն էին յափշտակած ձիւկներով ու թրթուրներով: Թրթուրներից զարգացած մըջիւններին իրենց ստրուկն են դարձնում և անխնայ բանեցնում:

Բայց մանաւանդ մի բան շատ զարմացրեց ինձ: Ես ընկել էի այնպիսի ստրկատէրերի մօտ, որոնք կեանքի մեծ մասը թափառում են, մի հաստատական տեղ չունին, շարունակ աւազակութիւն են անում, ուրիշներից ձիւկներ գողանում, ուրիշների ձմռան պաշարները թալանում: Իրենք հօ համարեա չեն աշխատում. նոյնիսկ, կը հաւատամք, ձանձրանում են իրենք իրենց ձեռքով կերակուր ուտելու: Երեակայեցէք, ներսի սենեակից մի հողագունդ պոկած դուրս եկայ վերև, ի՞նչ տեսնեմ. մեր տէրերը անշարժ կանգնած են, իսկ նրանց առջև, իւրաքանչիւրի մօտ մի-մի ստրուկ: Տէրերը հրում են ստրուկներին. իսկ ստրուկները նրանց կերակրում են, հիւթ են տալիս: Աշխատանքի անընդունակ են. եթէ ստրուկները չլինէին—նրանք սովածութիւնից կը մեռնէին: Իսկ երբ

բանը կուրի հասաւ, այն ժամանակ դու տես նրանց: Մեծ ու սուր ծնօտներով քեզ մաս-մաս կանեն: Կուեցու մէջ ուժեղ են, համարձակ և կատաղի: Նրանց գլխաւոր նպատակն է՝ շատացնել ստրուկների թիւը, որ նրանք թէ ձկինների վրայ հոգ տանեն և թէ իրանց կերակրեն. մի խօսքով՝ բոլոր աշխատանքները կատարեն:

Ես բաւական չարչարեցի: Հա էս արա, հա էն արա. ձոն տար, սրան կերակրի, նրան կերակրի: Բաւական տանջեցի: Անցաւ շատ ժամանակ. ինչ արած, սուս ու փուս կատարում էի ամեն բան: Իմ օրով քանի-քանի մըջնանոցներ թալանեցին: Շարունակ թալանած ձկիններ էին բերում: Ես այլևս համբերել չկարողացայ: Այնտեղ մեր ցեղից մի մըջիւն կար, շուտ մտերմացանք, վերջն էլ վճռեցինք միասին փախչել և հեշտութեամբ էլ փախանք:

Այդ առաւօտն էր, որ հանդիպեցինք բաւական վաղ, մեզանից քիչ հեռու անցնող մըջիւնների մի ընտանիքի: Մեր տէրերը իսկոյն իմացան և գնացին նրանց թալանելու: Ես ու ընկերս հսկողութեան տակ էինք: Երբ աւազակները ահազին թալանով վերադարձան, մըջնանոցում եղածները ուրախութիւնից վազեցին ընդառաջ: Մենք էլ հէնց այդ էինք ուզում. ծնօտիկներովս վերաւորեցի մէկ պահապանին, ընկերըս էլ միւս պահապանին և մենք փախանք... Փախանք առանց յետ նայելու: Ի հարկէ նրանք այդ իմացան, սաստիկ կատաղեցին և շտապեցին մեր ետևից: Բայց կարճ էին մեզ հասնել: Այնպէս էինք վազում, այնպէս, ինչպէս նետն է սլանում:

Անձրկն էլ որ եկաւ, ինչպէս երևում է, էլ չկարողացան մեզ հասնել: Վերջապէս ես մի կերպ հասայ տուն. իսկ ընկերս գնաց առաջ. նրանց բնակարանը մերից քիչ հեռու է...

— Կոնօ, — ասաց Միրմօն, — կարծես ես այսօր մի մըջիւն տեսայ ճանապարհին, արագ էր վազում: Հօ ընկերդ չէր... Կարմրագոյն է նա...

— Այո, այո, հէնց այդ է...

— Ի՜նչ ես կարծում, Կոնօ, — հարցրեց Սիման, — նրանք կը մոռանան այդ. Կարայի, Միրմօի պատճառով քանիսը սպանւեցին, հիմա էլ քո և ընկերիդ փախուստը...

— Հազիւ թէ մոռանան ինձ, — ասաց Կոնօն, — նրանք մեզանից այնքան էլ հեռու չեն: Չէ, միւնտյն է, այստեղից անպատճառ պէտք է տեղափոխւենք:

Պատմութիւնը վերջացաւ: Դրսում արևը շատ էր այրում, այդ է պատճառը, որ մըջիւնները իջան աւելի ներքև զովանալու: Սրահներից մէկով անցան թևաւոր մըջիւնները...

— Է՛լի այդ արունները անգործ թափառում են, — ասաց Կարան:

Միրմօին դուր չեկան Կարայի խօսքերը:

— Ի՜նչո՞ւ ես այդպէս ասում, Կարա. միթէ չգիտես որ երբ թագուհիները ձու ածեն վերջացնեն, նրանք էլ կամ կը մեռնեն, կամ թէ թևները կորցնելով աշխատանքի կը կաշեն. համբերիր, շուտով կազատւենք նրանցից:

Միրմօն, Կարան և Կոնօն յարմար տեղ գտնելով նստեցին հանգստանալու:

ՍԱՍՏԻԿ ԱՆՁՐԵԻ: ՊԱՏԵՐԱԶՄ: ԹՇՆԱՄԻՆԵՐԸ
ՅԱՂԹԻՈՒՄ ԵՆ: ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ:

Այն՝ ինչ որ ասում էր Կոնսն, ճիշտ դուրս եկաւ: Մեր մըջիւնների համար վատ օրեր վրայ հասան:

Մէկ անգամ բանւորները, զգալով ներքևի յարկերի խոնաւութիւնը (անձրևից յետոյ էր), վճռեցին իրենց թրթուրներին և հարսնուկներին տանել վերև, շարել արևի մեղմ ճառագայթների տակ: Թրթուրների և հարսնուկների շուտ զարգանալու համար հարկաւոր է որոշ տաքութիւն. խիստ խոնաւութիւնը վնասում է: Վերևի յարկերում այժմ համեմատաբար աւելի տաք էր:

Բայց տաք եղանակը խաբեց մըջիւններին: Նորից անձրև եկաւ և այս անգամ այնպէս սաստիկ, որ ջուրն սկսեց քիչ-քիչ մըջնանոցը մտնել: Իսկոյն թրթուրները իջեցրին ներքև, բոլոր մուտքերն էլ լաւ փակեցին:

Անձրևը չէր դադարում: Շուտով ջուրը քանդեց վերևի մուտքերը, անցաւ առաջին յարկը, բայց էլ ներքև չգնաց, որովհետև բանւորները նախօրօք ամուր փակել էին երկրորդ յարկը տանող մուտքերը:

Մըջիւնները իջել էին ամենավերջին յարկերը: Ձւերը, թրթուրներն էլ այնտեղ տեղափոխեցին: Մահանները լաւ փակեցին: Այդպիսի դրութեան մէջ ամեն բոլոր սպասում էին թէ այս է ջուրը պիտի ներս թափւի և ո՞վ գիտէ ինչ աւերածութիւն անի:

Բայց էլի բախտաւոր էին մըջիւնները: Ամառայ

անձրևները երկարատև չեն լինում: Այդպէս էլ հիմա եղաւ: Անձրևը եկաւ, եկաւ ու դադարեց: Վնասը շատ էլ քիչ չէր: Առաջին յարկը լցած էր ցեխով, փոքրիկ քարերով. անձրևաջուրն էր բերել թափել այդտեղ: Երրորդ յարկում միքանի սենեակների պատերը փլւել էին:

Անձրևը որ վերջացաւ, բանւորները նորից գործի կացան:

— Կոնս, ասաց Միրմօն, — ախր ինչո՞ւ մերոնք չեն ուզում նոր բնակարան տեղափոխւել: Այս աւերակներում ապրել չի լինիլ: Մի անգամ էլ ո՞ր սաստիկ անձրև գայ, բոլորս էլ կը խեղդենք:

— Գիտե՞ս ինչ, — խօսեց Կոնսն, — այժմ ես այնքան անձրևի մասին չեմ մտածում, այլ զգում եմ, որ թշնամիները այս օրերս անպատճառ կը գան: Այո, պիտի հեռանանք այստեղից:

Մի օր էլ անցաւ, մըջիւնները դեռ չէին հեռացել հին մըջնանոցից: Բանւորները ժամանակաւորապէս նորոգեցին աւերած տեղերը:

Երկրորդ օրը գլխաւոր մուտքի պահապանները յանկարծ իրար անցան: Զինւորներից մէկը մօտեցաւ միւսին ու ասաց. — Ընկեր, չե՞ս զգում թշնամու հոտը:

Ընկերը շարժեց շօշափումները, միքանի վարկեան լոռից և ապա պատասխանեց.

— Այո, ես էլ զգում եմ. առաջ էլ զգում էի, բայց կարծում էի թէ սխալում եմ:

Այդ բոլորին հեռում երևացին միքանի մըջիւններ. դրանք շտապում էին դէպի մըջնանոց: Մըջ-

նանոցի բանւորներէից էին, որոնք զգալով թշնամու մօտենալը, թողել էին աշխատանքն ու փախել: Պահակ զինւորները ճանաչեցին բանւորներին:

Ահա մօտեցան մըջիւնները. մէկը նրանցից վախեցած ասաց.

— Գալիս են, գալիս են... Նրանք յարձակեցին հարեան մըջնանոցի վրայ. մենք հազիւ ազատուցինք:

Շուտով մըջնանոցի մօտով վազել սկսեցին ցեղակից մըջիւններ:

Կոնօն և Միրբօն միքանիսին հարցութորձ արին.

— Ինչո՞ւ էք փախչում:

— Հապա ի՞նչ անենք, ասաց փախստականներից մէկը, — թշնամիները աւերեցին մեր մըջնանոցը: Ե՛լ ձու, է՛լ թրթուր ու հարսնուկ, է՛լ մեր ողջ տարւայ սլաշարը — բոլորը, բոլորը յափշտակեցին: Մերոնց էլ ըսկսեցին անխնայ կոտորել: Մեր վիճակն անտանելի է. փախչում ենք, բայց չգիտենք՝ ուր...

Այդ լուրը վատ տպաւորութիւն թողեց մեր մըջիւնների վրայ:

Հարկաւոր է հէնց այս բոլէիս հեռանալ այստեղից, — ասաց Միրբօն Կոնօյին: Կոնօն էլ մէկ ուրիշին ասաց՝ հարկաւոր է հեռանալ: Երկրորդը երրորդին ասաց և այսպէս միմեանց յայտնելով՝ վերջապէս որոշեցին՝ իսկոյն փախչել: Մի խումբ բանւորներ զինւորներով առաջ ընկան, որոնք պիտի ապահով տեղ ընտրէին բնակարանի համար:



Շուտով մնացած մրջիններն էլ ճանապարհ
ընկան: Ի հարկէ, վերցրին եղան-չեղածը՝ իրենց ձեռքը,
թրթուրները, հարսնուկները, ցորենի պաշարը. չմո-
ռացան և իրանց սիրելի կովերին:

Թշնամիները հեռու չէին: Նրանք շուտով հա-
սան թողած մրջնանոցը, ներս վազեցին և հիասթափ-
ւեցին. մէկ հատ կենդանի մրջին չգտան: Գտան
միայն քիչ քանակութեամբ ձիկներ, թրթուրներ
և բաւականաչափ ցորենի պաշար: Մեր մրջինները
բոլորը չէին կարողացել ազատել:

Աւազակները մրջնանոցի այս ու այն սենեակ-
ներն էին մտնում բան որոնելու, իսկ այդ միջոցին
մեր մրջինները մտան անտառ:

Թշնամիները քիչ բան գտնելով մրջնանոցում,
երկար չմնացին այդտեղ: Վազեցին առաջ, դէպի ու-
րիշ մրջնանոցներ: Պատահմամբ նրանք գնացին այն
ճանապարհով, որով մի քիչ առաջ փախել էին մեր
մրջինները:

Աւազակներն զգացին, որ փախչող մրջինները
շատ հեռու չեն իրանցից. ուստի շտապեցին և նոյն-
պէս մտան անտառ:

Աւազակներն աւելի խոշոր էին՝ մեծ-մեծ, սրա-
ծայր ծնօտիկներով: Բայց այդ ծնօտները բացի սպա-
նութիւնից անընդունակ էին որևէ աշխատանք
անելու:

Ահա թշնամիները հասան մեր մրջիններին և
յարձակեցին նրանց վրայ:



Մրջինների պատկերացումը:

Սկսեց մի սոսկալի պատերազմ: Երկու կողմերն էլ մեծ զայրոյրթով էին կռուում. իրար կծոտում, իրար ջարդում, իրար կոտորում:

Մեր մըջիւնները աւելի կատաղի էին կռուում: Նրանք առանց այն էլ զայրացած էին, որ անձրևը քանդել էր իրենց մըջնանոցը: Հիմա էլ աւագակները: Զայրոյթը կրկնապատկել էր: Այլ ու ձախ սպանում էին աւագակներին:

Աւագակները զարմացել էին: Բոլորովին չէին սպասում այդպիսի քաջ հակառակորդներին:

Միրմօն, թէև գինւորների ուժեղ ծնօտիկները չունէր, բայց աջ ու ձախ հարձակում էր թշնամուն: Ա՛խ դու աւագակ,— զայրանում էր նա,— քեզ ցոյց կը տամ թէ ինչ է նշանակում խաղաղ մըջիւնների վրայ յարձակել:

Ստրկատէր աւագակները մի ուժեղ յարձակում էլ գործեցին. քիչ էր մնում յաղթէին. բայց այդ միջոցին չորս կողմից նոր-նոր մըջիւններ երևացին, որոնք կայծակի նման վրայ ընկան աւագակների վրայ: Դրանք այնպէս անսպասելի թափեցին, որ թշնամին շփոթեց, բոլորովին թուլացաւ և սկսեց փախչել:

Մեր մըջիւններն ու նրանց անյայտ օգնականները վագեցին թշնամու ետեից և աջ ու ձախ սկսեցին կոտորել նրանց:

Պատերազմը վերջացաւ: Շատ զոհեր եղան երկու կողմից էլ: Կարան էլի վիրաւորւել էր. նրա շոշափուկներից մէկը, որ հագիւ էր լաւացել առաջայ վերջից, այժմ բոլորովին կոտորւել էր: Գլուխն էլ

վիրաւորւել էին. այդ էր պատճառը, որ Կարայի խելքը կարծես քիչ պակասել էր:

Միրմօն և Կոնօն լիզեցին Կարայի վերքերը, բայց միևնոյն է, յոյս չկար բոլորովին բժշկելու: Կարային տարան վիրաւորւածների մօտ:

Միրմօն շատ էր հետաքրքրում թէ ուրքեր էին իրանց օգնողները:

— Կոնօ, չգիտեմ ուրքեր էին,— հարցրեց Միրմօն:

— Այս բոպէիս կիմանաս,— ասաց Կոնօն, վագեց մի կողմ և շուտով վերադարձաւ մի ուրիշ մըջիւնի հետ:

Միրմօն երբ տեսաւ այդ կարմրագոյն մըջիւնին, մի բան յիշեց.

— Կոնօ, սա քեզ հետ փախչող ընկերիդ նման է...

— Այո, հէնց նա է. սրա ընկերներն էին մեզ օգնողները: Մընք էլ մեզ պէս վոնդւած են եղել մըջնանոցից անձրևի պատճառով: Անտառում մեզանից մօտ են թաղնւած եղել: Հէնց որ իմանում են, թէ թշնամին մեզ վրայ է յարձակւել՝ շտապում են մեզ օգնութեան: Հիմա առաջարկում են, որ միասին բնակարան շինենք և միասին ապրենք:

— Ի հարկէ, լաւ կը լինի,— ուրախացաւ Միրմօն:

Երկու մըջնանոցի մըջիւնները հաւաքեցին ձւերը, թրթուրները, հարսնուկները, որ յետ էին խլել աւագակներից և ճանապարհ ընկան: Վիրաւորւածներին էլ տարան իրենց հետ:

Թէ որտեղ նոր բնակարան շինեցին,— այդ, սիրելի ընթերցող, դժւար եղաւ իմանալ: Այս անգամ մըջիւն-

ները այնպիսի գաղտնի ճանապարհներով էին անցնում, այնպիսի խիտ խոտերի մէջ մտան, որ վերջը կորցրինք նրանց հետքը: Այս կողմ փնտրեցինք, այն կողմ վազեցինք, բայց չգտանք ու չգտանք:

Մէկ օր միայն (շատ չէր անցել պատերազմի օրից) Միրմօն և Կոնօն երևացին ցորենի արտում (առաջւայ արտը չէր): Կային և ուրիշ մըջիւններ: Կոնօն հետ փախչող մըջիւնն էլ այդտեղ էր: Հունձ էին անում: Կարծում էինք թէ այն անեղ պատերազմից յետոյ նրանք յուսահատւած պիտի լինէին, ոյժից ընկած, սովածութիւնից գուցէ մեռած. բայց ոչ, նրանք էլի առաջւայ պէս զւարթ էին:

—Կոնօ, Կոնօ,—ասաց Միրմօն—խնջքան ցորեն է: Դէ, շուտ հաւաքենք, թէ չէ այդ անպիտան երկոտանին մեզ կը խանգարի:

Ու նորից շարունակեցին հունձը:

Մոռացել էին՝ և՛ պատերազմը, և՛ անցեալ դժբախտութիւնները: Անցեալի վրայ մըջիւնները շատ մտածել չգիտեն: «Անցեալը անցուկ է», ասում են նրանք:

Ահա, ընթերցող, միմիայն այդ վերջին խօսակցութիւնը հասաւ մեր ականջին: Դրանից յետոյ՝ էլ չկարողացանք նրանց գտնել: Այդ ի հարկէ լաւ է. ուրեմն այժմ շատ ապահով տեղ են գտել: Թշնամիներն այլևս չեն անհանգստացնիլ. իսկ անպիտան թշնամիները լաւ դաս կերան: Մինչև հիմա էլ փնտրում ենք նրանց, գոնէ էլի մի անգամ տեսնէինք մեր Միրմօնին,

Կոնօն, Կարային: Ի՛նչ եղան, ի՛նչ են անում: Առողջացաւ արդեօք Կարան:

Շատ հաւանական է, որ նրանք այժմ աւելի բախտաւոր և աւելի ապանով են ապրում: Եթէ այդպէս է, շատ լաւ, մենք էլ հէնց այդ ենք ցանկանում: Թող լաւ ապրեն այդ ազնիւ աշխատաւորները: Այնպէս չէ՞, սիրելի ընթերցող:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the nature of the ink transfer.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the nature of the ink transfer.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the nature of the ink transfer.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the nature of the ink transfer.



23.228